ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2025

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր իմացական գործընթացն է ըստ Լ. Ս Վիգոտսկու բնորոշվում որպես հին տպավորությունների վրա նորի ավելացման, փոփոխման և նոր, նախկինում գոյություն չունեցող պատկերների ստեղծման գործընթաց:**

1) հիշողություն
2) ընկալում
3) երևակայություն
4) մտածողություն

2 **Ինչպե՞ս է կոչվում այս օրենքը. «Եթե գրգռիչի ուժն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, ապա զգայության ինտենսիվությունն աճում է թվաբանական պրոգրեսիայով»:**

1) փսիխոֆիզիկայի հիմնական օրենք
2) հմտության փոխանցման օրենք
3) փսիխոանալիզի հիմնական օրենք
4) հաճախականության օրենք

3 **Նշվածներից ո՞րն է սոցիալական բնավորության տիպ՝ ըստ Է. Ֆրոմմի:**

1) տնտեսագետ
2) կրոնական
3) շուկայական
4) քաղաքագետ

4 **Անձնավորության ո՞ր հատկությունն է ըստ Զ. Ֆրոյդի և Կ. Լորենցի բնազդային հակում, իսկ ըստ Փ. Մուսսենի, Ա. Բանդուրայի՝ սոցիալական փորձի արդյունք:**

1) կոնֆլիկտայնություն
2) ագրեսիվություն
3) իմպուլսիվություն
4) գրգռողականություն

5 **Նշվածներից ո՞րն է աֆեկտի տեսակ:**

1) փսիխոտիկ
2) հիսթերիկ
3) խրոնիկ
4) պաթոլոգիկ

6 **Նշվածներից ո՞րն է համարվում հոգեբանության՝ որպես ինքնուրույն գիտության ճանաչման տարեթիվ։**

1) 1895 թ.-ը, երբ Զ. Ֆրոյդը հրատարակեց «Պրոյեկտ» աշխատությունը
2) 1590թ.-ը, երբ գերմանացի գիտնական Ռ. Գոկլենիուսը հրատարակեց «Հոգեբանություն» աշխատությունը
3) 1732թ.-ը, երբ սկսած Հ. Վոլֆի «Էմպիրիկ հոգեբանություն» աշխատությունից, «հոգեբանություն» տերմինը մարդու հոգեկանը ուսումնասիրող գիտության համար դառնում է համընդհանուր կիրառելի
4) 1879 թ.-ը, երբ Գերմանիայում հիմնադրվեց հոգեբանության առաջին լաբորատորիան

7 **Ո՞վ է առաջին անգամ ձևակերպել «ռեֆլեքս» հասկացությունը։**

1) Յ. Պրոխազկա
2) Ռ. Գոկլենիուս
3) Ա. Մոնպելիե
4) Ռ. Դեկարտ

8 **Բիհևիորիստական տեսության մեջ ի՞նչ են հասկանում «օպերանտային վարք» ասելով։**

1) վարք, որը հենվում է տարբեր բարդության և տեսակի ռեֆլեքսների վրա և պայմանավորված է նախկինում նմանատիպ վարքի դրական կամ բացասական հետևանքներով
2) վարքն ու գործունեությունը մարդու կյանքի տարբեր իրավիճակներում պայմանավորող դինամիկ ստերիոտիպերի համակարգ
3) վարք ու գործունեություն, որոնք ապահովում են օրգանիզմի հարմարվողականությունը միջավայրի փոփոխվող պայմաններին՝ պայմանական-ռեֆլեկտորային կապերի համակարգի միջոցով
4) վարք, որը հենվում է բնազդների վրա և ապահովում օրգանիզմի հարմարումը շրջակա միջավայրի անբարենպաստ և փոփոխվող պայմաններին

9 **Նշվածներից ո՞րը անձնավորության կառույցի բաղադրիչ չէ՝ ըստ Կ. Գ. Յունգի։**

1) էգո
2) անհատական անգիտակցական
3) ենթագիտակցական
4) կոլեկտիվ անգիտակցական

10 **Հոգեբանական ո՞ր ուղղության հիմնաքարերից է այն գաղափարն, ըստ որի մարդկային կյանքի լիարժեքությունը բնորոշվում է սոցիալական հաջողություններով։**

1) հումանիստական հոգեբանություն
2) անալիտիկ հոգեբանություն
3) գեշտալտ հոգեբանություն
4) կոգնիտիվ հոգեբանություն

11 **Ո՞ր տարիքային փուլն է կարևոր համարվում աշխարհի նկատմամբ երեխայի հիմնարար վստահության ձևավորման հարցում՝ ըստ Է. Էրիքսոնի։**

1) դեռահասության տարիքը
2) կյանքի առաջին տարին
3) նախադպրոցական տարիքը
4) կրտսեր դպրոցական տարիքը

12 **Ինչի՞ հետազոտմանն է միտված Պիերոնի - Ռուզերի մեթոդիկան։**

1) ուշադրության հատկությունների
2) հիշողության հատկությունների
3) երևակայության գործընթացների
4) մտածողության գործընթացների

13 **Ինչպե՞ս է կոչվում օրգանիզմի և հոգեկանի ներքին կայունությունը պահպանող մեխանիզմը։**

1) հոմեոսֆերա
2) հոմեոպաթիա
3) հոմեոսթազ
4) հոմոլոգիա

14 **Ի՞նչ սկզբունքով են դասակարգվում հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի գործառույթները։**

1) ըստ աշխատանքների կազմակերպման ձևի
2) ըստ աշխատանքների բարդության
3) ըստ աշխատանքների տևողության
4) ըստ աշխատանքների վերահսկողության ձևի

15 **Ո՞վ է ներմուծել «Սոցիալական անգիտակցական» եզրույթը:**

1) Զ.Ֆրոյդը
2) Է.Ֆրոմմը
3) Կ.Յունգը
4) Վ.Ֆրանկլը

16 **Նշվածներից ովքե՞ր են բիհևիորիզմի ներկայացուցիչներ: Նշել դրանց համարները:**

1) Ու. Նայսեր
2) Է. Թորնդայք
3) Հ. Սալիվան
4) Ջ. Ուոթսոն
5) Բ. Սքիններ
6) Ջ. Դյուի
7) Ա. Ադլեր

17 **Նշվածներից որո՞նք են անձի հասունության չափանիշներ՝ ըստ Ա. Մասլոուի: Նշել դրանց համարները:**

1) ուշադրությունը սեփական Ես-ի խնդիրների վրա կենտրոնացնելը
2) մշակութային կոնֆորմիզմին դիմադրելու ընդունակությունը
3) միջավայրի հետ կոնֆլուենտիվ հարաբերությունները
4) ժամանակ առ ժամանակ մենակ մնալու, առանձնանալու պահանջը
5) Տիեզերքի հետ միասնության մեջ լինելու ապրումը
6) գործողությունների կողմնակի դրդմամբ բխող բնույթը
7) ստեղծագործական ընդունակությունները

18 **Դիսթրեսի նշված դրսևորումներից ո՞րոնք են հուզական: Նշել դրանց համարները:**

1) սթրեսի ազդեցությունը նվազեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ մտքեր
2) տագնապային ապրումներ, վախեր
3) բացասական, տագնապային մտքեր, մեկնաբանություններ
4) խուճապի և խուճապային գրոհի ապրում
5) կյանքի իրադրություններին տագնապային մեկնաբանություններ տալու հակվածություն
6) դեպրեսիվ մտքեր, հոռետեսական վերաբերմունք
7) տրամադրության խանգարումներ

19 **Նշվածներից որո՞նք են ըմբռնման գործընթացներ: Նշել դրանց համարները:**

1) պատկերի հստակեցումը
2) պատկերի հայտնաբերումը
3) պատկերի փոխատեղումը
4) պատկերի ստեղծումը
5) պատկերի ճանաչումը
6) պատկերի փոխանցումը
7) պատկերի աղճատումը

20 **Որո՞նք են յոթ տարեկանի ճգնաժամի դրսևորումներն՝ ըստ Լ. Ս. Վիգոտսկու: Նշել դրանց համարները:**

1) նպատակասլացությունը
2) անմիջականության կորուստը
3) շատախոսությունը
4) կամակորությունը
5) սեթևեթանքը
6) ընտրողականությունը
7) համարձակությունը

21 **Նշվածներից որո՞նք են սթրեսի փուլերից: Նշել դրանց համարները:**

1) սպառման փուլ
2) ահազանգի փուլ
3) վտանգի փուլ
4) դիմադրության փուլ
5) ակտիվացման փուլ
6) մերժման փուլ
7) հաղթահարման փուլ

22 **Նշվածներից որո՞նք են երեխաների կողմից վշտի ապրման փուլերը՝ ըստ Էլիզաբեթ Քյուբլեր-Ռոսի: Նշել դրանց համարները:**

1) ընդունում
2) մերժում
3) քննարկում
4) բարկություն
5) հիասթափություն
6) փաստարկում
7) բանակցություններ

23 **Նշվածներից որո՞նք են անձի ձևավորման սուբյեկտիվ պատճառներ՝ ըստ Վ. Դ. Ճադրիկովի: Նշել դրանց համարները:**

1) սոցիալականացումը
2) գիտակցությունը
3) հաղորդակցումը
4) հոգեկան վիճակները
5) արժեքային համակարգը
6) հոգեդինամիկ հատկությունները
7) էթնիկական հատկությունները

24 **Նշված պնդումներից որո՞նք են բնութագրում բարդույթներն ըստ Կ.Յունգի: Նշել դրանց համարները:**

1) բարդույթի միջուկն ու նրան միացած բաղադրիչները երբևիցե չեն կարող գիտակցվել
2) բարդույթը թեմատիկ միջուկ է, որի շուրջ հավաքված են գաղափարներ, կարծիքներ, հարաբերություններ, համոզմունքներ, հիշողություններ, որոնք զուգորդվում են որոշակի զգացմունքների հետ
3) բարդույթի թեմատիկ միջուկը որքան թույլ է, այնքան շատ հոգեկան երևույթներ է հավաքում իր շուրջը
4) բարդույթները հատուկ հուզական կառույցներ են, որոնք հարաբերական ինքնուրույնություն ունեն
5) բարդույթները դրսևորվում են որոշակի նախանշաններով, որոնց համադրման դեպքում ձևավորվում է ախտանիշ
6) բարդույթը չի կարող վերահսկել անձնավորությանը և հոգեկանն օգտագործել իր նպատակների համար
7) բարդույթի վերացման համար անհրաժեշտ է անհատական անգիտակցականից հանել հուզական լիցքավորում ունեցող բովանդակությունը

25 **Զգայություններին վերաբերող պնդումներից որո՞նք են ճիշտ: Նշել դրանց համարները:**

1) մոդալականությունը զգայության ժամանակային բնութագիրն է
2) հոտառական զգայությունը միայն դիստանտային է
3) արտաքին գրգռիչների ազդեցության դեպքում առաջացող զգայությունները կոչվում են էքստերոցեպտիվ
4) հավասարակշռության զգայությունը ինտերոցեպտիվ է
5) ինտերոցեպտիվ զգայությունների ընկալիչները տեղակայված են մարմնի մակերևույթի վրա
6) լսողական զգայություններն են հնչեղությունը,բարձրությունը, ձայներանգը
7) պրոպրիոցեպտիվ զգայություններն առաջ են գալիս մկաններում և հոդակապերում տեղակայված հատուկ ընկալիչների գրգռումից

26 **Նշված վախերից որո՞նք են 3-6 տարեկան երեխաների տարիքային վախեր՝ ըստ Ա. Ի. Զախարովի: Նշել դրանց համարները:**

1) երեխան վախենում է կտրուկ շարժումներից
2) երեխան վախենում է մոր բացակայությունից
3) երեխան վախենում է մենակ մնալուց
4) երեխան վախենում է, որ մտերիմները կարող են մահանալ
5) երեխան վախենում է մերժված լինել հասակակիցների կողմից
6) երեխան վախենում է աղետներից
7) երեխան վախենում է կտրուկ ձայներից

27 **Նշվածներից որո՞նք են զուգորդումների տեսակներ: Նշել դրանց համարները:**

1) կամային
2) տարբերության
3) համադրության
4) առընթերության
5) պատճառահետևանքային
6) ընդհանրական
7) հուզական

28 **Ըստ Հ. Մյուրրեի, նշվածներից որո՞նք են իշխելու շարժառիթի տեսակ: Նշել դրանց համարները:**

1) օգնության
2) պարգևատրման
3) հաջողության
4) ստիպողական
5) մրցակցության
6) նորմատիվ
7) մերձեցման

29 **Հիշողության գործընթացներին վերաբերող պնդումներից որո՞նք ճիշտ *չեն*: Նշել դրանց համարները:**

1) կամածին մտապահումը մարդու գիտելիքների հարստացման գործընթաց է
2) պահպանումը տեղեկույթի մշակումից, ճանաչումից, յուրացումից հետո հիշողության մեջ կուտակումն է
3) վերարտադրումը նախկին փորձի բաղադրամասերի արդիականացման գործընթացն է
4) վերհուշը տեղեկույթի պահպանման ձև է
5) ռեմինիսցենցիան անցյալի իրադրությունների և դրանց ուղեկցող հուզական ապրումների, տպավորությունների վերարտադրումն է
6) ճշտությունը և տևականությունը վերարտադրման որակական հատկանիշներ են
7) մտապահման համար օգտագործվում են մնեմիկ հնարներ

30 **Նշվածներինց որո՞նք են բնավորության շեշտվածության տիպեր՝ ըստ Կ.Լեոնհարդի: Նշել դրանց համարները:**

1) էպիլեպտոիդ
2) գրգռվող
3) ցիկլոիդ
4) խցանվող
5) էմոտիվ
6) շիզոիդ
7) պարանոյալ

31 **Տրված պնդումներից երեքը ճիշտ են: Նշել դրանց համարները:**

1. Ըստ Կ. Գ. Յունգի, անգիտակցականը արտամղված բնազդների պահեստ է:
2. Ավազաթերապիայում Մ. Լովենֆելդի կողմից ստեղծված առաջին տեխնիկան կոչվեց «Աշխարհի տեխնիկա»:
3. Ի տարբերություն այլ հոգեթերապևտիկ գործընթացների, երեխաների հետ աշխատանքում *չենք* հանդիպում փոխանցման (տրանսֆեր) և հակափոխանցման (կոնտրտրանսֆեր) գործընթացներին:
4. Ինտերիորիզացիան ներքին (հոգեկան) գործողության վերածումն է արտաքինի:
5. Մարդն ավելի լավ է հիշում այն գործողությունը, որն ավարտին չի հասցրել:
6. Նարցիսիզմը 3 տարեկանի ճգնաժամի ախտանշան է:
7. Ըստ Լ. Ա. Վենգերի, ծնողների կողմից երեխայի նկատմամբ խիստ վերահսկողությունը կազմում է նրա դպրոցական պատրաստվածության հիմքը:
8. Տարբեր պատկերների առանձնացված և ընտրված տարրերից նոր ամբողջի ստեղծումը կոչվում է դիսոցիացիա:
9. Ըստ Ջ. Ուոթսոնի, վարքը միակ օբյեկտն է, որ կարելի է ուսումնասիրել:

32 **Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները:**

1. Ըստ Լ.Վիգոտսկու միտքը ստեղծվում է խոսքի միջոցով:
2. Այն գործոնները, որոնք խթանում են մարդու մոտ սթրեսային պատասխանը, կոչվում են խնդրահարույց գործոններ:
3. Կուռքերի ստեղծումը դեռահասության ճգնաժամի ախտանշան է:
4. Ֆլեգմատիկի նյարդային համակարգը ուժեղ է, հավասարակշիռ, ռիգիդ:
5. Հոգեախտորոշիչ թեստը պետք է ունենա սոցիալ-մշակութային հարմարեցվածություն:
6. Բրոկայի կենտրոնի վնասման դեպքում մարդը *չի* կարողանում հասկանալ լսած բառերի իմաստը:
7. Խմբային աշխատանքը հակացուցված է սուր սթրեսային ռեակցիա ունեցող երեխաներին:
8. Ըստ Բ.Անանևի սուբորդինացիան անձի կառուցվածքի ձևավորման սկզբունք է:
9. Երևակայական պատկերների ստեղծման գործընթացում առավել կարևոր դեր ունի ձախ կիսագունդը:

33 **Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները:**

1. Պրոսոդիկան ձայնի տեմբրի, հնչերանգի, խոսքի արագության փոփոխությունը, բառի կամ արտահայտության շեշտադրումն է:
2. Հոգեբանական աշխատանքում գաղտնիությունը կարող է խախտվել, երբ կա հարցում իրավական մարմինների կողմից:
3. Հոգետրավման միշտ ունի ուժեղ բացասական իմաստ:
4. Հոգեշտկողական հեքիաթի ստեղծման համար պետք է ընտրել հերոսի, որը տարիքով երեխայից մեծ է, նրանից թե՛ ֆիզիկապես և թե՛ բնավորությամբ ուժեղ է:
5. Ինտրովերտներին հատուկ է զսպվածությունը, խնդիրներն աստիճանաբար լուծելու հակվածությունը:
6. Ըստ Լ. Ա. Վենգերի երեխայի վարքը կառավարող դրդապատճառային համակարգը կազմում է նրա դպրոցական պատրաստվածության հիմքը:
7. Կրտսեր դպրոցականի հետաքրքրությանը բնորոշ է այլոց կենսափորձը հաշվի առնելը:
8. Խմբային աշխատանքների համար անհրաժեշտ է սահմանել լողացող գրաֆիկ:
9. Ա.Ադլերը անհատական հոգեբանության հիմնադիրն է:

34 **Տրված պնդումներից երեքը ճիշտ են: Նշել դրանց համարները:**

1. Ա. Ֆրոյդը երեխայի հետ թերապևտիկ աշխատանքներում ներգրավում էր նաև ծնողներին:
2. «Թայմ աութ» տեխնիկան իրականացվում է հատուկ այդ նպատակով ընտրված տեղում, որտեղ երեխան կարող է հանդարտվել և մտածել իր վարքի մասին:
3. Երեխայի հետ թերապևտիկ աշխատանքում դիմադրություն կարող է լինել միայն երեխայի կողմից:
4. Ինքնամփոփությունը 7 տարեկանի ճգնաժամի ախտանշան է:
5. Սանգվինիկների նյարդային համակարգի անհավասարակշռությունը հաճախ հանգեցնում է կոնֆլիկտների:
6. Երեխաները կոնկրետ հասկացություններով դատողություններ են անում 4-5 տարեկանում:
7. Շոշափելիքի, հոտի և համի հիշողությունները ֆիլոգենետիկ զարգացման ընթացքում մարդու մոտ առաջին պլան են մղվել:
8. Ըստ Ժ.Պիաժեի, մտածողությունը խոսքից ուշ է զարգանում:
9. Երազները պասիվ երևակայության դրսևորումներ են:

35 **Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները:**

1. Է. Վագների «Ձեռք» թեստը կարող է կիրառվել երեխայի հուզական և անձնային առանձնահատկությունների հետազոտության նպատակով:
2. Անհատական աշխատանքի համար ավազի արկղի դասական չափերն են 50 սմ լայնություն, 70 սմ երկարություն և 8 սմ խորություն:
3. Աստենիկ հույզերի հետևանքով կենսական ուժերն ավելի բուռն են դրսևորվում:
4. Ըստ Հ. Այզենկի ինտելեկտը տեղեկույթի մշակման՝ ուղեղի կառուցվածքի և գործառույթների հետ կապված բնածին ընդունակություն է:
5. Կրտսեր դպրոցականի հետաքրքրությանը բնորոշ է մակերեսայնությունը և ցրվածությունը:
6. Ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաների հետ անհրաժեշտ է խոսել բարձր ձայնով և դիրեկտիվ ցուցումներով:
7. Պրոյեկտիվ թեստերը դժվարությամբ են ենթարկվում քանակական ցուցանիշների և հաշվարկների:
8. Ուսումնական հաստատության հոգեբանը կարող է հանդիսանալ կոնկրետ սովորողի ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացի համակարգող:
9. Սեփական անձը ուրիշներին ենթարկելու, ինքն իրեն պատժելու վարքագիծը կոչվում է դեստրուկտիվիզմ:

36 **Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները:**

1. Ըստ Ֆրոմի, անձի կարևոր բնութագրիչները «լինել» և «չլինել» հասկացություններն են:
2. Սովորաբար հետտրավմատիկ սթրեսային խանգարումները հազվադեպ են հանդիպում երեխաների մոտ:
3. Համադրական ոճի մտածողություն ունեցող մարդիկ հակված են ինտուիտիվ, ընդհանրական գնահատումների և մանրակրկիտ վերլուծություն չեն կատարում:
4. Պրոյեկտիվ մեթոդիկան *չի* կարելի համարել հոգեբանական ախտորոշման միակ և ընդգրկուն գործիքը:
5. Պատճառահետևանքային զուգորդումները ձևավորվում են կենսափորձի, գիտելիքների ձեռքբերման շնորհիվ:
6. Երեխայի հարմարումը ուսուցչի մտածելակերպի, դիրքորոշումների, վարքագծի հետ, կոչվում է մանկավարժական հարմարում:
7. Թերապևտիկ սենյակի՝ երեխայի համար նախատեսված հատվածում նպատակահարմար *չէ* ունենալ փակվող պահարաններ:
8. Մասնագիտությունների, ընկերների, զուգընկերների հաճախակի փոփոխությունը պատանեկության ճգնաժամի ախտանշան է:
9. Լացը, հազը, ծիծաղը, հոգոցը հոգեֆիզիոլոգիական արտահայտչամիջոցներ են:

37 **Տրված պնդումներից երեքը ճիշտ են: Նշել դրանց համարները:**

1. Իդենտիֆիկացիայի գործընթացն ավարտվում է 3 տարեկանում:
2. Վաղ տարիքում որպես հոգեկան նորագոյացություն հանդես է գալիս գիտակցության նշանային ֆունկցիան:
3. Ըստ Լ.Վիգոտսկու՝ տարիքային ճգնաժամերին հատուկ են ձևավորման և ավարտի որոշակիությունը:
4. Դ. Էլկոնինը ձևակերպել է անձի հոգեսոցիալական զարգացման տեսությունը:
5. Ասիմիլյացիան ենթադրում է պատասխան ռեակցիայի փոփոխություն՝ ստացվող փորձի հիման վրա:
6. Մանկիկության շրջանին բնորոշ է իրավիճակային-անձնային շփումը:
7. Վաղ տարիքում ընկալումն օժտված *չէ* աֆեկտիվ երանգավորմամբ:
8. Ժխտողականությունը իր ասածը, արածը մինչև վերջ տանելն է:
9. Ըստ Ժ. Պիաժեի երեխան ծնվում է որպես աուտիստիկ էակ:

38 **Տրված պնդումներից երեքը ճիշտ են: Նշել դրանց համարները:**

1. Ինքնապաշտպանական պահանջմունքը դեֆիցիտար պահանջմունք է:
2. Անիմուսը տղամարդու մեջ անգիտակցական կանացի մասի արխետիպն է:
3. Բռնության ենթարկված երեխաները կարող են ունենալ զգացմունքներն ու հույզերն արտահայտելու անկարողություն:
4. Ընդհանրացումն էական հատկանիշների հիման վրա առարկաների կամ երևույթների խմբավորումն է մի ընդհանուր հասկացության մեջ:
5. Վարքի ոչ սոցիալականացված խանգարում ունեցող երեխաները չունեն մտերիմ ընկերներ:
6. Մարմնի որոշակի կեցվածքը, որը տվյալ մշակույթում որոշակի իմաստ ունի, կոչվում է տակեստիկա:
7. Ակնառու-պատկերային մտածողությունը զարգանում է 18-24 ամսականում:
8. Պարբերաբար կրկնվող հակազդումները, որոնք անընդհատ հիշեցնում են տրավմատիկ իրողության մասին, կոչվում են գերզգոն հակազդումներ:
9. Արտաքին գրգռին ի պատասխան առաջացած ագրեսիան կոչվում է սպոնտան ագրեսիա:

39 **Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները:**

1. Ըստ Ա. Վալոնի, նախադպրոցական տարիքում արտաքին աշխարհի նկատմամբ երեխայի ուշադրությունը պայմանավորված է կողմնորոշման ռեֆլեքսով:
2. Ավազաթերապիայում մոտիվացիոն տեխնիկաները կիրառվում են թերապևտիկ տեխնիկաներից հետո:
3. Որքան մարդն ինտելեկտուալ է, այնքան ռացիոնալիզացումը հեշտ է կատարվում:
4. Բ. Սքինները օպերանտ վարքի տեսության հեղինակն է:
5. Այցելուի հետ «Ընտանիքի նկար» թեստը կիրառելիս խորհուրդ է տրվում բացատրել, թե ինչ է նշանակում «ընտանիք»:
6. Մինչև 2 տարեկան երեխայի քաշի և հասակի անհամապատասխանությունը տարիքային նորմերին կարող է անտեսման ֆիզիկական ցուցիչ լինել:
7. Նորագոյացությունը բնորոշ է ցանկացած ճգնաժամային տարիքի:
8. Երկարաժամկետ (տարեկան) նպատակները հստակ սահմանում են կրթության և զարգացման ոլորտը՝ ցույց տալով ակնկալվող վերջնարդյունքը:
9. Հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են:

40 **Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները:**

1. Կրտսեր նախադպրոցական տարիքում երևակայությունը վերարտադրական բնույթ ունի:
2. Ավազի պատկերը *չի կարելի* լուսանկարել՝ հետագայում դիտելու և քննարկելու նպատակով:
3. Ուրիշի վարքը բացատրելու նպատակով նրան ճիշտ կամ սխալ հատկությունների և դրդապատճառների վերագրումը կոչվում է ատրիբուցիա:
4. Դեպի ներս ուղղված զայրույթը բնորոշ *չէ* հոգետրավմային:
5. Ըստ Բ. Վ. Զեյգառնիկի, մարդն ավելի լավ է հիշում այն գործողությունը, որն ավարտին *չի* հասցրել:
6. Նյարդային համակարգի ուժը գրգռումից արգելակման անցման արագությունն է:
7. Ըստ Կ. Յունգի, բարդույթները հատուկ հուզական կառույցներ են, որոնք հարաբերական ինքնուրույնություն ունեն:
8. Հենրի Մյուրեն Թեմատիկ ապերցեպտիվ թեստի հեղինակն է:
9. Ընտանեկան միջավայրով սահմանափակվող վարքային խանգարման դեպքում տնից դուրս երեխայի վարքը և սոցիալական փոխհարաբերությունները ընդունելի վարքի սահմաններում են: